Le recueil est dédié à la mémoire
des victimes des massacres des Arméniens de Marache
à l'occasion du 90e anniversaire de cet événement

Ժողովածուն նվիրվում է Մարաշում զոհված
հայերի հիշատակին՝ իրադարձության 90-ամյա
տարելիցի կապակցությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

1920 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՄԱՐԱՇՈՒՄ

(ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Աշխատասիրությամբ՝ Վարուժան Պողոսյանի

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
62

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
62

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
2010

ACADÉMIE NATIONALE DES SCIENCES DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE
INSTITUT D'HISTOIRE

LES MASSACRES DES ARMÉNIENS DE MARACHE EN 1920

(RECUEIL DE DOCUMENTS)

Documents réunis et présentés par
Varoujean Poghosyan

EREVAN 2010

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Հ-140

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պողոսյան Վ.
Հ-140 1920 թվականի հայերի կոտորածները Մարաշում: Փաստաթղթերի ժողովածու/ ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ.; Աշխատասիրությամբ Վ. Պողոսյանի.- Եր., 2010.-163 էջ:

Պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանի աշխատասիրությամբ տպագրության պատրաստված փաստաթղթերի սույն ժողովածուն ամփոփում է 1920 թ. Մարաշում քեմալականների իրականացրած հայերի կոտորածները լուսաբանող՝ ֆրանսերեն և անգլերեն լեզուներով բազմազան տպագիր ու անտիպ նյութեր, որոնք քաղված են հայկական արխիվներից, ժամանակի անգլիական և ֆրանսիական մամուլից, օտարերկրյա և հայ ականատեսների հուշերից:

ԵՊՀ Գրադարան
SU0204342
101188

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-99941-73-49-5

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Библиотека [illegible]

ԱՌԱՋԱԲԱՆ

1920 թ. Մարաշի կոտորածները, որոնց զոհն են դարձել շուրջ 16000 հայեր, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության (1984-1922) գործընթացի անքակտելի փուլերից է: 1920 թ. սկզբին քեմալականների կազմակերպած և իրականացրած կոտորածները Մարաշում ազգայնամոլական շարժման ղեկավար, պատմության մեջ Աթաթուրք (թուրքերի հայր) մականվամբ հայտնի, Մուստաֆա Քեմալի որդեգրած հակահայկական քաղաքականության ցայտուն դրսևորումներից է: «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդ II-ի և երիտթուրքերի արյունոտ գործն ավարտին հասցնելուն վճռականորեն նախանձախնդիր Մուստաֆա Քեմալը հետամուտ էր նախորդ կոտորածներից փրկված հայերին բնաջնջելու քաղաքականությանն ամբողջ կայսրության տարածքում: Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության գործընթացն այս ժամանակաշրջանում ունեցել է իր առանձնահատկությունները:

Հայ ժողովրդի նկատմամբ օսմանյան տարբեր վարչակարգերի կիրառած ցեղասպան քաղաքականությունն ի սկզբանե դրսևորվել է տարատեսակ եղանակներով, ինչպիսիք են զանգվածային կոտորածները և տեղահանությունները, բռնի կրոնափոխությունը, արհեստականորեն կազմակերպված սովը գյուղերում և այլն: Այնուամենայնիվ, հարկ է նկատի ունենալ, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Օսմանյան կայսրությունում և մասնավորապես հայկական վեց վիլայեթներում, այլ կերպ ասած՝ XVI դարում թուրքերի կողմից ռազմակալված՝ հայ ժողովրդին պատկանող պատմական հայրենիքում, հայեր այլևս գրեթե գոյություն չունեին, ինչը քեմալականներին դրդել է հայերի դեմ ուղղված ցեղասպան քաղաքականությունն իրականացնել ոչ միայն Օսմանյան կայսրությունում, այլև դրա տարածքից դուրս: 1920-ական թթ. սկզբին Հայաստանի հանրապետություն քեմալական զորքերի ներխուժման արդյունքում, վերջիններս ոչնչացրել են նաև այս տարածաշրջաններում բնակվող խաղաղասեր հայ բնակչությանը: Ըստ թուրքական սկզբնաղբյուրների՝ Ռ. Սաֆրաստյանը և Հ. Ղազարյանը վերջերս բացահայտել են թե՛ հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպան քաղաքա-

կանությունը շարունակելու և թե՛ միաժամանակ Հայաստանը որպես պետություն վերացնելու քեմալականների մտադրությունը[1]:

Ազգային պետության ստեղծմանը հետամուտ՝ Մուստաֆա Քեմալը պարբերաբար կազմակերպել է Թուրքիայում բնակվող քրիստոնյա փոքրամասնությունների (հատկապես հայերի և հույների) կոտորածներ: Ցեղասպանության՝ իբրև երևույթի, ամերիկացի մեծ մասնագետ Իրվինգ Լուի Հորոուիցը միանգամայն իրավամբ հավաստել է, որ ցեղասպանությունը պետության համաձայնությամբ իրականացվող զանգվածային ոչնչացման հստակ միջոց է, որն օգտագործվում է ազգային համախմբման համար[2]: Մուստաֆա Քեմալի ազգային քաղաքականությունը դրա լավագույն ապացույցներից է:

1890-1910-ական թվականներին ցեղասպանությունից հրաշքով խույս տված մեծ թվով հայեր 1920-ական թվականների սկզբին կենտրոնանում են Կիլիկիայում: Այս իսկ պատճառով, թուրք ազգայնամոլների ուշադրությունը գրավում է մասնավորապես այս տարածաշրջանը: Հարկ չկա թափանցել 1920 թ. հունվար-փետրվար ամիսներին Մարաշում հայերի ոչնչացմանն առնչվող մանրամասների մեջ: Ընթերցողն այդ մասին ամբողջական պատկերացում կստանա տարբեր արժանահավատ սկզբնաղբյուրներից քաղված՝ բացառապես անգլերեն և ֆրանսերեն լեզուներով փաստաթղթեր ամփոփող սույն ժողովածուի ընթերցման արդյունքում, որոնք կամ գլխավորապես օտար ականատեսների (ամերիկացի, բելգիացի և այլք) վկայություններն են, կամ անգլիական և ֆրանսիական առաջատար լրագրերում տպագրված՝ Օսմանյան կայսրությունում գտնվող նրանց թղթակիցների հաղորդագրությունները:

Սույն ժողովածուի առաջին բաժինն ընդգրկում է տողերիս հեղինակին մատչելի՝ եվրոպական թերթերում տպագրված հա-

---

[1] *Ռ. Սաֆրաստյան*, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 191-194; *Հ. Ղազարյան*, Մոսկվայի և Կարսի 1921 թվականի պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, էջ 179-181:

[2] Տե՛ս *I.L. Horowitz*, Taking Lives. Genocide and State Power. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 354: Նրա հետ համամիտ է Իսրայել Չառնին. *I.W. Charny*, Étude du génocide.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny, Toulouse, 2001, p. 67.

ղորդագրություններ: Երկրորդ բաժնում ի մի են բերված ժամանակակիցների վկայությունները, այդ թվում՝ հայկական արխիվներից քաղված և առաջին անգամ շրջանառության մեջ դրվող որոշ փաստաթղթեր: Ինչ վերաբերում է ժամանակակիցների հուշերին, ապա դրանց թվում ընտրվել են առավել մեծ կարևորություն ներկայացնողները, որոնց հավաստիությունը փոքր իսկ տարակարծությունների տեղիք չի տալիս: Խոսքը վերաբերում է Մարաշում ֆրանցիսկյան եկեղեցու քահանա, բելգիացի Մ. Մյուրեի, Ամերիկյան կանանց հիվանդանոցների տնօրեն Մ. Է. Էլիոթի, ամերիկացի բժշկական սպա Ս. Է. Քերրի, Մարաշում երիտասարդների քրիստոնեական կազմակերպության քարտուղար Ս. Ֆ. Հ. Քրաթերնի և այոց անաչառ վկայություններին: Չեն շրջանցվել նաև անգլերեն և ֆրանսերեն լեզուներով լույս ընծայված հայ հոգևոր գործիչներից ոմանց հուշերը: Փաստաթղթերի, այդ թվում հուշերի, հեղինակներն իրադարձության միևնույն դրվագները չեն նկարագրել, այլ թղթին են հանձնել Մարաշի տարբեր վայրերում ծավալված կոտորածների նկարագրությունները, որոնց ականատեսը եղել են: Վերջին հաշվով, նրանց վկայությունները համալրում են միմյանց և նպաստում 1920 թ. Մարաշի կոտորածների շուրջ լիարժեք պատկերացումների ձևավորմանը: Նշենք, ի դեպ, որ հեղինակներից ոմանք վկայում են կոտորածների ընթացքում թուրքական իշխանությունների մոտ առկա կանխամտածվածությունը՝, որը ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բնորոշիչներից է[3]:

Մարաշաբնակ հայերը ոչնչացվել են ամենաբարբարոսական եղանակներով՝ 1920 թ. հունվարի վերջին ֆրանսիացիների դեմ բռնկված թուրքերի ապստամբության ընթացքում: Անգլիայի և Թուրքիայի միջև 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքված զինադադարի 16-րդ հոդվածը նախատեսում էր թուրքական «զորքերի դուրս բերում Կիլիկիայից, բացառությամբ այն զորքերի, որոնք անհրաժեշտ են կարգ ու կանոն պահպանելու

---

[3] Այդ մասին տե՛ս *F. Chalk & K. Jonassohn*, The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies, New Haven & London, 1990, p. 26; *Y. Ternon*, L'État criminel. Les génocides au XXe siècle, Paris, 1995, pp. 91-92 ; *V. Dadrian*, The Determinants of the Armenian Genocide, [Yale], 1998, p. 7; *J. Balint, I.W. Charny*, Définitions du génocide.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, pp. 43-44:

համար»[4]: Ըստ այդմ՝ ֆրանսիական և անգլիական կառավարությունները 1919 թ. հունվարին պայմանավորվածություն են կայացնում Կիլիկայում վերահսկողության իրականացումը ֆրանսիական ռազմական իշխանություններին վերապահելու շուրջ՝ անգլիացի գեներալ Ալենբիի ընդհանուր հրամանատարությամբ: Այս համաձայնությունից հետո նախորդ զանգվածային կոտորածներից փրկված կիլիկիահայ վտարանդիները վերադառնում են իրենց հայրենիք: Սակայն չնայած հայերի անվտանգության երաշխավորությանն առնչվող ֆրանսիացի զինվորական իշխանությունների խոստումներին, վերջիններս, այդուհանդերձ, նրանց հովանավորելու ցանկություն, ըստ էության, չեն դրսևորում[5]: Ի վերջո, ֆրանսիացիների դեմ թուրքերի ապստամբության ընթացքում, ֆրանսիական զորքերի նահանջի հետևանքով 1920 թ. հունվար-փետրվար ամիսներին ոչնչացվում են շուրջ 16000 հայեր: Դրան մեծապես նպաստում է այն, որ ըստ ֆրանսիական զինվորական իշխանություններից ստացված հրամանների՝ Մարաշում տեղակայված ֆրանսիական զորամասերը լքում են քաղաքը և այնտեղ գտնվող հայերին հանձնում նրանց թուրք դահիճների ողորմածությանը:

Ֆրանսիական իշխանությունների քաղաքականությունը բազմիցս արժանացել է պատմաբանների ուշադրությանը, ուստի և սույն ժողովածուի երրորդ բաժնում զետեղվել են իրադարձության ժամանակակիցների (մասնավորապես ֆրանսիացի) առաջադրած անկողմնակալ դատողություններն այս առնչությամբ, որոնք անհերքելիորեն բացահայտում են ֆրանսիական ղեկավար շրջանակների քաղաքականության նենգ դիմագիծը: Նշենք, որ ժողովածուում տպագրված որոշ փաստաթղթեր հնարավորություն են ընձեռում նաև կողմնորոշվելու ժամանակակիցների անհամատեղելի մեկնաբանություններում, ինչն օրինաչափ է: Նկատի ունեմ ֆրանսիական կառավարական «Տան» լրագրի կառավարամետ դիրքորոշումը, որը նպատակ ուներ արդարացնել կամ առնվազն հիմնավորել ֆրանսիական զորքերի նահանջը:

---

[4] *Ա. Պեյլերյան*, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ II: Փաստաթղթերի ժողովածու, ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, էջ 412:

[5] Տե՛ս *Р.Г. Саакян*, Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., Ереван, 1986, с. 83-85.

Փոխարենը, 1919-1920 թթ. Մարաշում տեղակայված ֆրանսիական զորքերի հրամանատարներից գնդապետ Էդուարդ Բրեմոնի վկայությունները ձեռք են բերում առանձնահատուկ նշանակություն, քանզի III հանրապետության կառավարության արևելյան քաղաքականության օգտին չեն վկայում: Ի դեպ, 1929 թ., Արամ Թուրաբյանի գրքի հրատարակության կապակցությամբ, արդեն գեներալ Բրեմոնը խոստովանել է, որ 1920 թ. Մարաշը լքելու պատասխանատվությունը բարդվում է Սիրիայում գտնվող ֆրանսիական զորքերի բարձրագույն հրամանատարության վրա. «Մարաշը լքել կարգադրել է գնդապետ Նորմանը, որը Բեյրութից եկել էր ստանձնելու շարասյան հրամանատարությունը՝ անձամբ գեներալ Գուրոյից հրահանգներ ստանալուց հետո: Այսպիսով, տրամաբանական է կարծել, որ լքումը բխում էր Գուրոյի կամքից, թեպետ վերջինս պատսպարվում էր հեռագրով (այն դեպքում, երբ լքումն արդեն ընթացքի մեջ էր), որտեղ նշվում էր մոտավորապես հետևյալը. «Պարզ է, որ խոսքը Մարաշի լքմանը չի վերաբերվում», մինչդեռ զորքերը վերադառնում էին Իսլահիե»[6]:

Բրեմոնի հստակ դատողության առնչությամբ Հ. Նազարյանցը հանգել է հետևյալ իրատեսական հետևության. «Պ. գեներալ Բրեմոնը Մարաշը լքելու պատասխանատվությունը բարդում է գեներալ Գուրոյի կառավարության վրա, ավելի ճշգրիտ կլիներ այդ նահանջի, ինչպես նաև Կիլիկիայում իրականացվող հակահայկական քաղաքականության պատասխանատվությունը վերագրել պ. Արիստիդ Բրիանի կառավարությանը: Ընդհանուր առմամբ, գեներալ Գուրոն հետևում էր այն հրահանգներին, որոնք ֆրանսիական դիվանագիտության ղեկավարը կարգադրում էր իրականացնել»[7]:

Հրատարակության ներկայացնելով փաստաթղթերի սույն ժողովածուն, տողերիս հեղինակը գերադասում է Մուստաֆա Քեմալի ազգային քաղաքականությանը, ինչպես նաև ֆրանսիական ղեկավար շրջանակների վարքագծին առնչվող հետևությունները թողնել անկողմնակալ ընթերցողներին:

Վարուժան Պողոսյան

---

[6] La lettre du général Brémond ancien gouverneur de la Cilicie au sujet de « L'Éternelle victime de la Diplomatie Européenne », Marseille, 1929, pp. 1-2.

[7] Նույն տեղում, էջ 5:

AVANT-PROPOS

Les massacres de Marache de 1920, lors desquels presque 16.000 Arméniens ont péri, sont l'une des étapes imprescriptibles du processus du génocide des Arméniens (1894-1922) dans l'Empire ottoman. Ces massacres, organisés et perpétrés par les autorités kemalistes au début de 1920, sont la preuve la plus spectaculaire de la politique anti-arménienne, adoptée par Moustapha Kemal, le chef du mouvement nationaliste, qui est entré dans l'histoire sous le surnom d'Ataturk (le père des Turcs). Résolu à achever l'œuvre sanglante d'Abdhülhamid II, le *sultan rouge*, et celle des Jeunes-Turcs, Moustapha Kemal poursuivait le but d'exterminer les Arméniens rescapés des précédents massacres sur tout le territoire de la Turquie. Or, le processus du génocide des Arméniens à cette époque avait certainement des traits particuliers.

Certes, dès le début, la politique génocidaire perpétrée par différents régimes ottomans à l'égard du peuple arménien avait eu divers moyens de réalisation, à savoir, meurtres collectifs, déportations en masse, conversion forcée, organisation artificielle de la famine dans les villages, etc. Toutefois, il faut prendre en considération qu'après la Première Guerre mondiale il n'avait presque plus d'Arméniens dans l'Empire ottoman et, en premier lieu, dans les six *vilayets* arméniens, autrement dit, dans la patrie historique appartenant aux Arméniens, occupée par les Turcs au XVIe siècle. C'est la raison principale ayant incité les kemalistes à réaliser cette fameuse politique génocidaire dirigée contre les Arméniens non seulement dans l'Empire ottoman, mais également hors de son territoire. Au début des années 1920, lors de l'invasion par les troupes kemalistes du territoire de la République d'Arménie, ces dernières ont exterminé les Arméniens pacifiques habitant ces régions. R. Safrastyan et H. Ghazaryan, en se référant aux sources turques, ont récemment relevé la ferme volonté des kemalistes de continuer la politique génocidaire du peuple arménien et à la fois leur intention d'écraser l'État arménien indépendant[8].

Cependant, ce qui m'intéresse dans ce cas, ce sont les massacres des Arméniens perpétrés par les kemalistes à Marache. Les Arméniens échappés par miracle au génocide des années 1890-1910, se sont

---

[8] *R. Safrastyan*, L'Empire ottoman : la genèse du programme du génocide (1876-1920), Erevan, 2009, p. 248 (en arménien) ; *H. Ghazaryan*, Les traités de Moscou et de Kars de 1921 et leur rôle tragique dans les destinés du peuple arménien, Erevan, 2010, pp. 179-181 (en arménien).

dispersés au début des années 1920 dans différents endroits de l'Empire ; un grand nombre s'était concentré en Cilicie. C'est pourquoi c'est cette région qui a attiré l'attention des nationalistes turcs en premier lieu.

Dans le but de la création d'un État national, Moustapha Kemal organisait régulièrement les massacres des minorités chrétiennes (surtout des Arméniens et des Grecs) habitant en Turquie. Irving Louis Horowitz, le grand spécialiste américain du phénomène du génocide, a certainement raison d'affirmer que le génocide est une forme précise d'extermination massive, exigeant l'assentiment de l'État, qui s'en sert pour exalter la solidarité nationale[9]. La politique nationale de Moustapha Kemal en est l'une des meilleures preuves.

Je n'ai pas l'intention d'entrer dans les détails qui sont en relation avec le déroulement des massacres des Arméniens de Marache. Le lecteur en peut recevoir une information complète à travers les pages de ce recueil qui contient des documents tirés des sources authentiques sorties de la plume soit des témoins oculaires, surtout étrangers (américains, belge et d'autres), soit publiés dans les célèbres journaux anglais et français d'après les renseignements reçu de leurs correspondants de l'Empire ottoman.

Il est composé de trois parties dont la première comprend des documents de la presse étrangère disponible. J'ai réuni dans sa deuxième partie les attestations des contemporains, y compris des documents tirés des archives arméniennes. Quant aux mémoires des contemporains, j'ai choisi parmi celles-ci les plus importantes dont personne ne peut mettre l'authenticité en doute. Il s'agit surtout de celles des étrangers comme M. Muré, curé belge de l'Église franciscaine de Marache, M.E. Elliott, patronne de l'*American Women's Hospitals*, S.E Kerr, officier médical et sanitaire américain, C.F.H. Crathern, secrétaire de *Young Mens' Christian Association* à Marache et d'autres. Je n'ai pas négligé non plus les mémoires de quelques-uns des hommes religieux arméniens, publiées en anglais et en français. Ces auteurs n'ont certainement pas décrit les mêmes épisodes de l'événement : ils ont laissé des descriptions des massacres des Arméniens dans différents points de Marache, ce dont ils ont été les témoins oculaires. Dans leur ensemble, leurs attestations

---

[9] *I.L. Horowitz*, Taking Lives. Genocide and State Power. Fifth Edition, Revised, New Brunswick & London, 2002, p. 354. Israël Charny partage son avis. Voir : *I.W. Charny*, Étude du génocide.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de *Israel Charny*, Toulouse, 2001, p. 67.

complètent les unes les autres, en contribuant à la formation d'une notion plus au moins complète des massacres des Arméniens de 1920 à Marache. Citons, entre autres, que certains auteurs prouvent l'existence de l'intentionnalité chez les autorités turques lors de ces massacres, ce qui est l'une des essentielles composantes du phénomène du génocide[10].

Les Arméniens de Marache ont été exterminés par les moyens les plus barbares dans le contexte de l'insurrection des Turcs contre les Français, éclatée à la fin de janvier 1920. Comme la clause 16 de l'armistice de Moudros signé entre l'Angleterre et la Turquie le 30 octobre 1918 prévoyait le « retrait des troupes [turques] de Cilicie, exception faite pour celles qui sont nécessaires au maintien de l'ordre »[11], les gouvernements français et britanniques se sont mis d'accord en janvier 1919 pour passer le contrôle en Cilicie aux autorités militaires françaises sous le commandement du général anglais Allenby. Après cet accord, les Arméniens survivants, émigrés auparavant de la Cilicie, sont retournés dans leur patrie. Or, en dépit des promesses données par les autorités militaires françaises aux Arméniens d'assurer leur sécurité, elles n'ont pas assuré leur protection[12]. En fin de compte, lors de l'insurrection des Turcs contre les Français, presque 16.000 Arméniens ont péri en résultat de la retraite des troupes françaises. Celles-ci, d'après les ordres reçus de la part des autorités militaires françaises, ont livré les habitants arméniens de Marache à la merci de leurs bourreaux turcs.

Comme cette circonstance a fait couler beaucoup d'encre dans l'historiographie, j'ai cru convenable de publier dans la troisième partie de ce recueil, des jugements impartiaux, surtout français, avancés par les contemporains de l'événement, dévoilant de manière irréfutable le vrai visage de la politique perfide des milieux gouvernementaux français lors de la crise de Marache. Citons, que certains documents publiés donnent également la possibilité de s'orienter dans les interprétations

---

[10] Voir par exemple : *F. Chalk & K. Jonassohn*, The History and Sociology of Genocide. Analyses and Case Studies, New Haven & London, 1990, p. 26; *Y. Ternon*, L'État criminel. Les génocides au XXe siècle, Paris, 1995, pp. 91-92 ; *V. Dadrian*, The Determinants of the Armenian Genocide, [Yale], 1998, p. 7; *J. Balint, I.W. Charny*, Définitions du génocide.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, pp. 43-44.

[11] *A. Beylerian*, Les grandes puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918), Paris, 1983, p. 703.

[12] Voir *R.G. Sahakyan*, Les relations franco-turques et la Cilicie en 1918-1923, Erevan, 1986, pp. 83-85 (en russe).

incompatibles les unes avec les autres des contemporains. Il s'agit surtout de la position du journal français le *Temps*, dont les publications officieuses avaient eu le but de justifier ou du moins d'argumenter la retraite des troupes françaises.

Par contre, il est hors de doute que les attestations du général Édouard Brémond (en 1920 encore colonel), l'un des acteurs principaux de l'évacuation des troupes françaises de Marache, sont d'un intérêt particulier, car elles ne sont point en faveur de la politique du gouvernement de la IIIe République. Brémond a avoué quelques années plus tard, en 1929, que la responsabilité de l'abandon des Arméniens de Marache incombait au haut commandement des troupes françaises en Syrie : « L'abandon de Marache a été ordonné par le Colonel Normand, qui était venu de Beyrouth prendre le commandement de la colonne après avoir reçu personnellement des instructions du général Gouraud. Il est donc logique de penser que l'évacuation résulte de la volonté de Gouraud, bien que celui-ci se soit couvert, alors qu'elle était déjà accomplie, par un télégramme disant à peu près : « Il est entendu qu'il n'est pas question d'évacuer Marache », alors que les troupes rentraient à Islahié ! »[13]

À propos de la proclamation de Brémond, H. Nazariantz, en vient à la conclusion suivante, que je partage complètement, que le général Brémond attribuait l'abandon de Marache au gouvernement du général Gouraud, mais il serait plus exact d'attribuer cette retraite au gouvernement d'Aristide Briand. En somme, le général Gouraud suivait les instructions que le maître de la diplomatie française ordonnait d'exécuter[14].

En présentant ce recueil de documents à la publication, l'auteur de ces lignes préfère laisser les conclusions relatives à la politique nationale de Moustapha Kemal, ainsi qu'à la conduite des milieux gouvernementaux français aux lecteurs impartiaux.

Varoujean Poghosyan

---

[13] La lettre du général Brémond, ancien gouverneur de la Cilicie, au sujet de « L'Éternelle victime de la Diplomatie Européenne », Marseille, 1929, pp. 1-2.
[14] Ibid., p. 5.